

<p>Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)</p>	<p align="center">ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (7.20&SՊ005)</p>
<p>ECTS կրեդիտ</p>	<p>3 կրեդիտ</p>
<p>Ուսումնառության վերջնարդյունքներ</p>	<p align="center">Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p align="center"><i>(գիտելիք և իմացություն)</i></p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել ճարտարապետական հուշարձանների վերականգնման պատմության և նրա կարևոր փուլերի հիմնական բնութագրերը, • ցույց տալ պատմաճարտարապետական հուշարձանների ժամանակակից ըմբռնումների ձևավորման հիմնական փուլերի, վերականգնման և վերակառուցման պատմականորեն ձևավորված ու արդի հիմնական սկզբունքները և մեթոդները, • սահմանել հուշարձանների ճարտարապետական վերլուծության գիտահետազոտական համակարգը, • տիրապետել կառույցի տեխնիկական վիճակի փաստագրման և ախտորոշման հիմունքներին, • ճանաչել հուշարձանների ամրակայման, վերականգնման ու օգտագործման մեթոդական, նախագծային և շինարարական առանձնահատկությունները, <p align="center"><i>(կարողություններ)</i></p> <ul style="list-style-type: none"> • գնահատել պատմամշակութային ժառանգությունը, • մշակել ճարտարապետական հուշարձանի պահպանությանն ու վերականգնմանը նպաստող հետազոտական ու նախագծային որոշակի գործողություններ, • ցուցաբերել որոշակի գիտելիքներ հուշարձանների ամրակայման ու վերականգնման մեթոդակարգի և հիմնարար սկզբունքների կիրառման վերաբերյալ:
<p>Դասընթացի թեմատիկ ծրագիր</p>	<ul style="list-style-type: none"> • Անտիկ հուշարձանների վերականգնումը: • Ոճական վերականգնումը: • Հնագիտական վերականգնումը: • Վերականգնման պատմությունը Հայաստանում: • Վերականգնումը Երկրորդ Աշխարհամարտից հետո:

	<ul style="list-style-type: none"> • «Ճարտարապետական հուշարձան» և «վերականգնում» ժամանակակից հասկացողությունների հիմունքները: • Ճարտարապետական ժառանգության պահպանության բնագավառում գործունեությունը կարգավորող միջազգային փաստաթղթերը:
	<ul style="list-style-type: none"> • Գիտական վերականգնումը Հայաստանում: • Վերականգնման տեսակները՝ ամրակայում կամ կոնսերվացիա, բացում, վերականգնում, վերակառուցում, վերաստեղծում: Ամրակայում /կոնսերվացիա/: • Վերականգնում: Անալոգիայի մեթոդը: • Հուշարձանի հարմարեցում և օգտագործում: • Վերականգնման հատուկ դեպքեր: • Համալիր հետազոտությունը՝ որպես վերականգնման նախագծային հիմնավորում: • Վերականգնման նախագծի հիմնական առանձնահատկությունները և կազմը: • Վերականգնման արտադրության ընդհանուր առանձնահատկությունները: • Ճարտարապետի դերը վերականգնման նախագծի իրականացման ժամանակ:
<p>Դասընթացի գրականության ցանկ</p>	<ul style="list-style-type: none"> • Հարությունյան Վ.Մ., Նալբանդյան Գ.Ա., Գրիգորյան Ա.Գ. Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը, Ուսումնական ձեռնարկ: Երևան, «Դար» հրատարակչություն, 2003, 280 էջ, ISBN 99930-889-6-X: • Նալբանդյան Գ.Ա., Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձանների վերականգնման փորձը, «Բազմավեպ» հայագիտական, բանասիրական, գրական հանդես, N 1-2, 234 էջ, Վենետիկ - Սուրբ Ղազար, 2014թ, «Հայկական պատմաճարտարապետական ժառանգության պահպանում և վերականգնում» խորագրով գիտաժողովի նյութեր, 204-227 էջեր, ISBN 1722-4969: • Михайлковский Е.В. и др. Методика реставрации памятников архитектуры. - Москва: «Стройиздат», 1977г. -167с. • Подьяполский С.С. у др. Реставрации памятников архитектуры. - Москва: Изд. «Строительство», 2014г. - 285с.: ISBN 978-5-9647-0247-4.